ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ք.Երևան **1 մարտ, 2018թ.**

ՈՐՈՇՈՒՄ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2015 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման նպատակով անցկացվող մրցույթի և ռոտացիայի կարգը սահմանելու մասին» N 300-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ ՀՀ արդադարադատության նախարարի՝ 2018 թվականի փետրվարի 26-ի թիվ 46-Ա հրամանով ստեղծված Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման գործընթացի իրականացման նպատակով ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Հայաստանի գործատուների հանրապետական միության կողմից ներկայացված փաստաթղթերի լրիվությունը և համապատասխանությունը 2015 թվականի փետրվարի 19-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և փորձագիտական հանձնախումբ ստեղծելու, խորհրդի կազմը, խորհրդի, փորձագիտական հանձնախմբի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն

ծրագրերի մոնիթորինգի բաժնի գործունեության կարգը հաստատելու մասին» N 165-Ն որոշման հավելված 2-ի 7-րդ կետի պահանջներին:

2. Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության կողմից ներկայացված հայտին ընթացք չտալ՝ հաշվի առնելով հայտ ներկայացրած կազմակերպության կողմից Որոշման հավելվածի 14-րդ կետով սահմանված ժամկետում թերությունները չշտկելը:

3. Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման նպատակով անցկացված մրցույթի արդյունքները տրամադրել ՀՀ արդարադատության նախարարին՝ ՀՀ վարչապետին ներկայացնելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝ ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

Հանձնաժողովի անդամներ՝ ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ